Արձանագրություն N 3

ՀՀ դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկի կարիքների համար՝
«Վարչական շենքերի վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով
կազմակերպված «ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-01/16» ծածկագրով
պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» ապրիլի 2016թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**), ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Աղավնի Բուդույան՝ (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**), Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**), Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**), Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**), Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

1.1.1 <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ-ի, <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ-ի, <<Ագարակ>> ԲԲԸ-ի, <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ի, <<Մեվրիկար>> ՍՊԸ -ի, <<Աբակ>> ՍՊԸ-ի, <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ-ի, <<Բիդեք>> ՍՊԸ-ի, <<Հիմնաքարեր>> ՍՊԸ-ի, <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ-ի, <<Հեր-Մուշին>> ՍՊԸ-ի, <<Թիվ1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի, <<Հ.Պողոսյան>> ՍՊԸ-ի և <<Մարտշին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

1.2.1 <<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ-ի, <<ՄարտՇին>> ՍՊԸ-ի և <<Հ.Պողոսյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.2 <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ <<Տեխնիկական միջոցների մասին հայտարարության>>՝ Հավելված 3.3, շարադրանքը թերի է:

բ/ <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված <<Գնի առաջարկում>>, Հավելված 4, 2-րդ չափաբաժնի մասով սխալ է հաշվարկված և գրված <<Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/:

գ/ Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝ Վճարման պահանջագրում ամսաթիվը (ներկայացման ամսաթիվը) լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, այնինչ <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ -ի կողմից լրացվել է վերոնշյալ ամսաթիվը:

դ/ Վճարման պահանջագրում նշված չէ արժույթը:

ե/ Վճարման պահանջագրում գումարը բառերով սխալ է նշված:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ -ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.3 <<Ագարակ>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ Տուժանքի մասին համաձայնության՝ Հավելված 9, 3-րդ կետում՝ <<Ընկերության հասցեն, բանկայանին վավերապայմաններում>>, նշված հաշվեհամարը և տարբեր է Վճարման պահանջագրում նշված հաշվեհամարներից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Ագարակ>> ԲԲԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.4 <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ անհրաժեշտ է՝ <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվի պարզաբանում՝ արդյոք <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունում՝ Հավելված 3.1, նշված պայմանագրերը համապատասխանում են Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակներին:

բ/ անհրաժեշտ է՝ <<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվի պարզաբանում Հավելված 9-ում (Տուժանքի մասին համաձայնություն) գլխավոր հաշվապահի անուն-ազգանունի և ստորագրության բացակայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.5 <<Մեվրիկար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ <<Մեվրիկար>> ՍՊԸ -ի կողմից թերի են ներկայացվել Հրավերով պահանջվող լիցենզիաները /լիցենզիաների պատճենները/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.6 <<Աբակ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ Ընթացակարգին մասնակցելու դիմումի՝ Հավելված 1, շարադրանքը թերի է,

բ/ Վճարման պահանջագրում նշված չէ արժույթը,

գ/ Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝ Վճարման պահանջագրում ամսաթիվը (ներկայացման ամսաթիվը) լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, այնինչ <<Աբակ>> ՍՊԸ-ի կողմից լրացվել է վերոնշյալ ամսաթիվը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Աբակ>> ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.7 <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ Ընթացակարգին մասնակցելու դիմումը՝ Հավելված 1, կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան,

բ/ Հրավերով ներկայացված Վճարման պահանջագրի օրինակելի ձևում լրացված է շահառուի՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի ՀՎՀՀ-ն: <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վճարման պահանջագրում սխալ է նշված շահառուի ՀՎՀՀ-ն:

գ/ <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Գնի առաջարկում>>, Հավելված 4, չշված չէ 2-րդ չափաբաժնի համարը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ -ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.8 <<Բիդեք>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ Ընթացակարգին մասնակցելու դիմումում՝ Հավելված 1, նշված չէ չափափաբժնի /չափաբաժինների/ համարները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.9 <<Հիմնաքարեր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ Տուժանքի մասին համաձայնության մեջ՝ Հավելված 9, <<Ընկերության տնօրենի անձնագրային տվյալները>> մասում լրացված է միայն տնօրենի նույնականացման քարտի համարը,

բ/ Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝ Վճարման պահանջագրում ամսաթիվը (ներկայացման ամսաթիվը) լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, այնինչ <<Հիմնաքարեր>> ՍՊԸ-ի կողմից լրացվել է վերոնշյալ ամսաթիվը,

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Հիմնաքարեր>> ՍՊԸ -ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.10 <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ Տուժանքի մասին համաձայնության մեջ՝ Հավելված 9, սխալ է նշված գնման առարկայի /ձեռք բերվող աշխատանքների/ անվանումը,

բ/ Տուժանքի մասին համաձայնության մեջ նշված չէ Ընկերության ՀՎՀՀ-ն,

գ/ Վճարման պահանջագրից հանված է <<Արժույթ>> տողը և լրացված չէ արժույթը:

դ/ Հրավերով ներկայացված Վճարման պահանջագրի օրինակելի ձևում լրացված է թե շահառուի՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի ՀՎՀՀ-ն, թե հաշվեհամարը, թե շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության անվանումը: <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վճարման պահանջագրում թվարկված տեղեկատվությունը լրացված չէ:

ե/ <<Տեխնիկական միջոցների մասին հայտարարության>> վերջին պարբերությունում լրացված չէ <<Ընթացակարգի մասնակցի անվանումը>>,

զ/ <<Ֆինանսական միջոցներ>> չափանիշի (Հայտարարություն ֆինանսական միջոցների մասին) մասով Հրավերով սահմանված է, որ եթե Մասնակիցը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ապա Մասնակիցը հայտով ներկայացնում է Հավելված 3.4-ը, եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է Հավելված 3.5-ը: Հաշվի առնելով, որ <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ -ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ուստի <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ -ն պետք է ներկայացներ միայն Հավելված 3.4-ը, այնինչ վերջինիս կողմից ներկայացվել է նաև Հավելված 3.5-ը, որն ավելորդ է:

է/ <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Գնի առաջարկում>>՝ Հավելված 4, 1-ին պարբերության շարադրանքը թերի է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ -ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.11 <<Հեր-Մուշ Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ Ընթացակարգին մասնակցելու դիմումում՝ Հավելված 1, հստակ նշված չէ, թե ընթացակարգի որ չափաբաժիններին մասնակցելու ցանկություն ունի մասնակիցը:

բ/ Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունում՝ Հավելված 3.1, նշված չէ համանման /նմանատիպ/ պայմանագրի անվանումը:

գ/ Տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացված է թվով երկու վճարման պահանջագրեր, սակայն Տուժանքի մասին համաձայնության մեջ նշվում է <<կից ներկայացված պահանջագիր>> և ոչ պահանջագրեր: Ենթադրաբար մասնակիցը յուրաքանչյուր չափաբաժնի

համար ներկայացրել է վճարման առանձին՝ մեկ պահանջագիր, սակայն հստակ չէ, թե որ պահանջագիրը որ չափաբաժնին է վերաբերում,

դ/ Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝ Վճարման պահանջագրում ամսաթիվը (ներկայացման ամսաթիվը) լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, այնինչ <<Հեր-Մուշ Շին>> ՍՊԸ -ի կողմից լրացվել է վերոնշյալ ամսաթիվը,

ե/ հայտի ապահովման չափը պակաս է <<Հեր-Մուշ Շին>> ՍՊԸ -ի հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Հեր-Մուշ Շին>> ՍՊԸ -ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.12 <<Թիվ1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա/ Ընթացակարգին մասնակցելու դիմումում՝ Հավելված 1, նշված չէ, թե ընթացակարգի որ չափաբաժիններին մասնակցելու ցանկություն ունի մասնակիցը,

բ/ Ընթացակարգին մասնակցելու դիմումում՝ Հավելված 1, <<7.5 կետի 1-ին ենթակետով>> բառերի փոխարեն պետք էլինեն <<7.5 կետի 2-րդ ենթակետով>> բառերը,

գ/ Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունում՝ Հավելված 3.1, շարադրանքը թերի է,

դ/ Տուժանքի մասին համաձայնության մեջ առկա հաշվապահի ստորագրությունը, սակայն նշված չէ հաշվապահի անուն-ազգանունը,

ե/ Տուժանքի մասին համաձայնության և վերջինիս կից ներկայացված վճարման պահանջագրում նշված են տարբեր բանկեր և տարբեր հաշվեհամարներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Թիվ1 Շինվարչություն>> ԲԲԸ -ի հայտը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2.13 <<Մարտ Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան.

<<Ֆինանսական միջոցներ>> չափանիշի (Հայտարարություն ֆինանսական միջոցների մասին) մասով Հրավերով սահմանված է, որ եթե Մասնակիցը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ապա Մասնակիցը հայտով ներկայացնում է Հավելված 3.4-ը, եթե Մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա հայտով ներկայացնում է Հավելված 3.5-ը: Հաշվի առնելով, որ <<Մարտ Շին>> ՍՊԸ -ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ուստի <<Մարտ Շին>> ՍՊԸ -ն պետք է ներկայացներ միայն Հավելված 3.4-ը, այնինչ վերջինիս կողմից ներկայացվել է նաև Հավելված 3.5-ը, որն ավելորդ է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Մասնակիցների առաջարկած գներն են՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Չափաբաժնի համարը և անվանումը									
		Չափաբաժին 1. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ					Չափաբաժին 2. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքում աշխատասենյակների վերահատակագծման աշխատանքներ				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	<<ԱՇԿԱՐ>> ՍՊԸ	5922000	651420	6573420	1314684	7888104	6188000	680680	6868680	1373736	8242416
2	<<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ	6954871	695487	7650358	1530072	9180430	7255555	725555	7981110	1596222	9577332
3	<<Ազարակ>> ԲԲԸ	5255255	578078	5833333	1166667	7000000	5480480	602853	6083333	1216667	7300000
4	<<ԳԱՄՇԻՆ>> ՍՊԸ	6190000	309500	6499500	1299900	7799400	6270000	313500	6583500	1316700	7900200
5	<<Մեվրիկար>> ՍՊԸ	6300000	315000	6615000	1323000	7938000	6500000	325000	6825000	1365000	8190000
6	<<Աբակ>> ՍՊԸ	5762000	576200	6338200	1267640	7605840	6120000	612000	6732000	1346400	8078400
7	<<Վ.Վարդանյան>> ՍՊԸ	5310022	531002	5841024	1168205	7009229	5513222	551322	6064544	1212909	7277453
8	<<Բիդեք>> ՍՊԸ	5852080	585208	6437288	1287458	7724746	7264511	726451	7990962	1598192	9589154
9	<<Հիմնաքարեր>> ՍՊԸ	6380500	701855	7082355	1416471	8498826	6756500	743215	7499715	1499943	8999658
10	<<Էլիտ Հիլզ>> ՍՊԸ	5900000	649000	6549000	1309800	7858800	6550000	720500	7270500	1454100	8724600
11	<<Հեր-ՄուշՇին>> ՍՊԸ	5300000	100000	5400000	1080000	6480000	5600000	150000	5750000	1150000	6900000
12	<<Թիվ1 Շինվարչություն>> ԲԲԸ	6503000	650300	7153300	1430660	8583960	6621000	662100	7283100	1456620	8739720
13	<<Հ.Պողոսյան>> ՍՊԸ	6156156	677177	6833333	1366667	8200000	6381381	701952	7083333	1416667	8500000
14	<<Մարտշին>> ՍՊԸ	5188679	311321	5500000	1100000	6600000	–	–	–	–	–

3.Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. ապրիլի 22-ին ժամը՝ 11:30-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4.Հանձնաժողովի քարտուղարին.

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ Աղավնի Բուդույան

Կարեն Մելքոնյան

Կարեն Համբարձումյան

Անահիտ Ավագյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան